

Արձանագրություն թիվ 2

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2021թ հոկտեմբերի 22-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաշվետվությունը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:

3. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղոչիկյան.

- Հարգելի գործընկերներ ֆակուլտետի գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 13 հետևաբար կարող ենք սկսել մեր աշխատանքը: Խորհրդում՝ ուսանողական կազմից ունենք3 նոր անդամ: Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Օրակարգի 2-րդ հարցը տեղափոխենք հաջորդ նիստին քանզի Շ.Ա.Մարգարյանը հարգելի պատճառով բացակայում է:

Տ.Վ.Ղոչիկյան- Այժմ խոսքը տանք Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահին

Կ.Ռ.Գրիգորյան_ Ինչպես տեղեկացված էք և՛ մեթոդ խորհրդի նիստերից, և՛ դեկանատի նիստերից մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունները պայմանավորված են որոշ առարկաների կիսամյակային տեղաշարժով համապատասխան կրեդիտով այլ առարկայի հետ և կամ անվան հստակեցմամբ:

Ելույթ ունեցողին հարցեր տրվեցին

Անալիտիկ և անօրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրյան- հնարավոր է հիմա իրականացնել որոշակի փոփոխություններ:

Կ.Ռ.Գրիգորյան- Այո, կարող էք

Տ.Վ.Ղուչիկյան- Ինչ վիճակում է նոր ներկայացված “Նյութագիտություն” մասնագիտացման ծրագիրը:

Կ.Ռ.Գրիգորյան- Ծրագիրը ընթացքային կանոնակարգային խախտումներով էր դրա համար մի փոքր հետաձգվեց, սակայն հիմա գտնվում է արտոնագրման փուլում:

Ծրագրի ղեկավար Ա.Ս.Գալստյանը հավելեց, որ ծրագրի ծածկագրի համար պահանջվել է կարճ մեկնաբանությունը՝ հստակ ցույց տալու համար տարբերությունը նյութագիտության և Ճարտարաբանական համալսարանում դասավանդվող մոդելավորում առարկաների միջև:

Տ.Վ.Ղուչիկյանը- Ծրագրի ընթացքին հետևողական եղեք:

Տ.Վ.Ղուչիկյան- Ռեկտորատից ծանուցում ենք ստացել, որ քիմիայի 2021/2022 թ. քիմիայի ծրագիրը չի տեղադրված:

Կ.Ռ.Գրիգորյան- Ծրագիրը պատրաստ է այն կտեղադրվի ԵՊՀ-ի թարմացված կայքում:

Տ.Վ.Ղուչիկյան-Այժմ անցնենք ընթացիկ հարցերին. ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար դիմել են մեր ֆակուլտետի գերազանց առաջադիմությամբ 5 ուսանող՝ Նիկողոսյան Հասմիկ, Պետրոսյան Արտյոմ, Եգանյան Տիգրան, Արզումանյան Աշխեն և Վարդապետյան Վլադիմիր:

Ն.Ա.Դուրգարյան- նախքան թեկնածուների տվյալների ներկայացնելը, խնդրում եմ ասեք. Ավարտական կուրսի մասնավորապես մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողները իրավունք ունեն մասնակցելու այդ մրցույթին.

Տ.Վ.Ղուչիկյան – Այո կարելի է, քանի դեռ ուսանող է՝ անկախ կուրսից: Անցնենք փաստաթղթերի քննարկմանը և ելույթներին:

Քիմիայի ֆակուլտետի “Քիմիա” բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի՝ Հասմիկ Հակոբի Նիկողոսյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ ք.գ.թ.,ասիստենտ. Ա.Ս.Գալստյանը, օրգանական ամբիոնի վարիչ, ք.գ.դ.,պրոֆ. Ն. Ա. Դուրգարյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ Հ. Նիկողոսյանը համալսարանի բակալավրիատի ուսման գերազանցիկ է, ակտիվ մասնակցություն ունի ֆակուլտետի գիտական և հասարակական կյանքին: Ելույթ ունեցողների առաջարկությունը պաշտպանեցին նաև դոցենտ, Ա.Ի.Մարտիրոսյանը և պրոֆ. Կ. Ռ. Գրիգորյանը:

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Հասմիկ Հակոբի Նիկողոսյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետի “Քիմիա” բաժնի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի՝ Աշխեն Սամվելի Արզումանյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ ք.գ.թ.,դոցենտ. Ա.Ս.Գալստյանը, օրգանական ամբիոնի դոցենտ Ի.Լ.Ալեքսանյանը, ք.գ.դ.,պրոֆ. Ն. Ա. Դուրգարյանը, ք.գ.դ.,պրոֆ Հ.Գ. Խաչատրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Աշխեն Արզումանյանը Քիմիայի ֆակուլտետի բակալավրիատի ուսման գերազանցիկ է, ուսումնառության ընթացքում «Հայկական քիմիական ամսագրում» ունի հրատարակված մեկ աշխատանք: Ելույթ ունեցողների առաջարկությունը պաշտպանեցին նաև դոցենտ, Ա.Ի.Մարտիրոսյանը և պրոֆ. Կ. Ռ. Գրիգորյանը:

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Աշխեն Արզումանյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին – Քիմիայի Ֆակուլտետի “Քիմիա” բաժնի բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանող՝ Արտյոմ Վարուժանի Պետրոսյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի դեկան ք.գ.դ., պրոֆեսոր Տ.Վ. Ղաչիկյանը դեկանի տեղակալ՝ ք.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գալստյանը, օրգանական ամբիոնի վարիչ ք.գ.դ., պրոֆ. Ն. Ա. Դուրգարյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Ա. Պետրոսյանը Քիմիայի ֆակուլտետի բակալավրիատի ուսման գերազանցիկ է (ՄՈԳ-19.48), ակտիվ մասնակցություն ունի ֆակուլտետի գիտական և հասարակական կյանքին: Ա. Պետրոսյանը 2021թ-ի սեպտեմբերից Քիմիայի ֆակուլտետի ՈւԳԸ նախագահն է և Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ: 2020թ-ից հանդիսանում է ՀՀ Քիմիայի առարկայական օլիմպիադայի հանրապետական հանձնաժողովի անդամ: 2020թ –ին Արժանացել է բրոնզե մեդալի “Մենդելեևյան” Միջազգային օլիմպիադայից, և բրոնզե մեդալի՝ Քիմիայի համաշխարհային օլիմպիադայից: ՈւԳԸ ՀՀ անկախության 30-ամյակին նվիրված միջազգային 7-րդ գիտաժողովում հանդես է եկել զեկույցով:

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Ա.Վ. Պետրոսյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին – Քիմիայի Ֆակուլտետի “Քիմիա” բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող՝ Վլադիմիր Վահանի Վարդապետյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի դեկանի տեղակալ՝ ք.գ.թ., դոցենտ. Ա.Ս.Գալստյանը, անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ Ա.Ի.Մարտիրոսյանը, պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Վ.Վարդապետյանը Քիմիայի ֆակուլտետի մագիստրատուրայի գերազանց առաջադիմությամբ ուսանող է, ակտիվ մասնակցություն ունի ֆակուլտետի գիտական և հասարակական գործունեությունում: 2021-թ-ից Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է: Ուսումնառության ընթացքում նախաձեռնել և կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ Էքսպո-2019, Էքսպո-2021 և այլն: 2016թ-ից զբաղվում է գիտական գործունեությամբ: Ներգրավված է թեմատիկ պայմանագրային դրամաշնորհում: Գիտական գործունեության արդյունքները արտացոլվում են հրատակված 6 հոդվածներում և 3 միջազգային գիտաժողովների թեզիսներում: Առարկայական օլիմպիադաների մասնակցության համար ստացել է պատվոգրեր: Վ.Վարդապետյանը հաղթող է ճանաչվել “ԵՊՀ լավագույն ուսանող -2019” մրցույթում :

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Վլադիմիր Վարդապետյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Լսեցին – Քիմիայի ֆակուլտետի “Քիմիա” բաժնի մագիստրատուրայի 2-րդ

կուրսի ուսանող՝ Տիգրան Հայկի Եզանյանի թեկնածությունը ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի առաջին փուլին մասնակցելու համար:

Արտահայտվեցին – Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Ս.Վ.Ղուչիկյանը, դեկանի տեղակալ՝ ք.գ.թ., դոցենտ Ա.Ս.Գալստյանը, ք.գ.թ., դոցենտ Լ.Ս.Գաբրիելյանը :

Ելույթ ունեցողները նշեցին, որ Տիգրան Եզանյանը Քիմիայի ֆակուլտետի ուսումնառության ընթացքում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, ակտիվ մասնակցություն ունի ֆակուլտետի գիտական և հասարակական կյանքին: Ավարտական աշխատանքը իրականացրել է Ռոստոկի համալսարանում պրոֆ. Պ.Լանգերի գիտական խմբում: Տ. Հ. Եզանյանը իր գիտական գործունեության արդյունքները հրատարակել է 2 հոդվածի և 1 թեզիսի տեսքով: 2021թ-ից հանդիսանում է ՀՀ Քիմիայի առարկայական օլիմպիադայի հանրապետական հանձնաժողովի անդամ: 2020-2021թթ եղել է ԵՊՀ, Քիմիայի ֆակուլտետի ՈւԳԸ նախագահ, և Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ: Տ.Եզանյանը

ներգրավված է եղել մի շարք դրամաշնորհներում՝ 2019-2020 ANSEF-2019, Chemorg 5288, 2021թ-ի սեպտեմբերից 21SCG-1D005 թեմայում:

Ելույթ ունեցողների առաջարկությունը պաշտպանեցին նաև դոցենտ Ի.Լ.Ալեքսանյանը և պրոֆ. Կ. Ռ. Գրիգորյանը:

Որոշեցին – Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ միաձայն որոշեց Տիգրան Հայկի Եզանյանի թեկնածությունը ներկայացնել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուս. հաստատությունների՝ լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթին մասնակցելու համար:

Տ.Վ.Ղուչիկյան – հաջորդ ընթացիկ հարցը քիմիայի ֆակուլտետի կայքի թարմացումն է: Ռեկտորատից գրություն ենք ստացել, որ կայքը չի թարմացվել: Պետք է կարճ հոլովակի տեսքով ներկայացնենք ֆակուլտետը և դրա գործունեությունը:

Առաջարկ եղավ այս աշխատանքում ներգրավվել նաև Քիմիայի ֆակուլտետի ՈԻԽ և ՈԻԳԸ անդամներին:

Քիմիայի ֆակուլտետի դեկան,

Գիտխորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Քիմիայի ֆակուլտետի

գիտ. քարտուղար, դոցենտ

Մ. Ա. Սամվելյան